

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 30/6

25 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Ի Էմ Էյջ Քոնսթրաքշն» ՓԲԸ 31.10.2014 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ ՕԿՎ և ԽՀՎ ՀՏ 08.10.2014 թ-ի թիվ 1010264 ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 31.03.2014 թ-ի թիվ 1010264 հանձնարարգրի համաձայն «Ի Էմ Էյջ Քոնսթրաքշն» ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ՕԿՎ և ԽՀՎ ՀՏ 08.10.2014 թ-ի թիվ 1010264 ակտը:

Նշվեց նաև, որ «ՎՏԲ Հոլդինգ» ՓԲԸ տնօրեն Վահագն Հարությունյանի կողմից անվճարունակության հատկանիշներ կանխամտածված ստեղծելու դեպքի կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածի հատկանիշներով 05.07.2014 թ-ին ՀՀ ՖՆ քննչական վարչությունում հարուցվել է թիվ 83113213 քրեական գործը, որին կցվել են նաև «Ի Էմ Էյջ Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի վերաբերյալ նյութերը: Նշված քրեական գործի շրջանակներում ՀՀ ՖՆ քննչական վարչությունում կատարվում է նախաքննություն:

Հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել և քննվում է թիվ 83113213 քրեական գործը, անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության բողոքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Ի Էմ Էյջ Քոնսթրաքշն» ՓԲԸ 31.10.2014 թ-ի բողոքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ